



10. Լրացնել բաց թողնված բառերը -----2 միավոր

Գերմանիան վարչատարածքային կառուցվածքով \_\_\_\_\_ է, ազգային կազմը՝ \_\_\_\_\_ է, աշխարհի առավել ուրբանիզացված երկրներից է, քաղաքային բնակչության բաժինը \_\_\_\_\_% -ից ավելի է, 3,5 մլն մարդ բնակվում է \_\_\_\_\_ քաղաքում:

11. ՀՀ մակերևույթի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ, ո՞րը սխալ -----2 միավոր

ա/ Շիրակի դաշտը, Փամբակի հովիտը դանդաղ իջնում են, իսկ շրջապատող լեռնաշղթաները՝ բարձրանում

բ/ Փամբակի լեռնաշղթայի ամենաբարձր գագաթն է Թեժ լեռը՝ 3597 մ բարձրությամբ

գ/ Վարդենիսի լեռները եզերում են Սևանա լիճն արևմուտքից

դ/ ՀՀ ծայր հս-արև մասում են գտնվում Զավախքի և Եղնախաղի լեռները

12. Կատարել համապատասխանեցում «պետություն – բնական հարուստ ռեսուրսներ» սկզբունքով-----2 միավոր

ՀԱՀ, բորատներ, երկաթաքար, Իսլանդիա, Ավստրալիա, երկրաջերմային էներգիա, Թուրքիա, ոսկի

13. Այս լիճը քաղցրահամ է, գտնվում է երկու պետությունների սահմանում: Նրանից սկիզբ է առնում Դեսագուեդերո գետը, թափվում է մեկ այլ, բայց աղի լճի մեջ: Ո՞րն է այդ քաղցրահամ լիճը, ի՞նչ բարձրության վրա է ծովի մակարդակից: Ո՞ր երկու պետությունների սահմաններում է և ո՞ր լիճն է թափվում սկիզբ առնող գետը: -----2 միավոր